

ծի դնել Զեյր յանկարծաբանողի ձեռքերը՝ զորս իւղաներկ պատկերներու մէջ խիստ կերպով սանձած էր: Արդիւնքն եղած է զմայլելի վայելչութիւն մը և շնորհք: Կեցցէ՛ք ի բոլոր սրտէ:

Զեյր
Ս. ՖԵՐԵՐԵ

Շնորհակալ եմ այն հանոյթին՝ զոր քու առողջ և պարզ արուեստը ընձեռեց իմ ծերացած զգայնութիւնս:

ՌԵՊԵՐՈՅՈՒՆ ՊՐԱՅՆՈՅՈՒՆ



ԿԱՐԱՊԵՏ ԿՈՍՏԱՆԵԱՆ

Ա.

Բանասիրական շարժումը

Իւրաքանչիւր ազգի լեզուն հարստացնելու, զրականութիւնը մշակելու, բարբառները հետազոտելու և պատմութեան աղբիւրներն ուսումնասիրելու համար անհրաժեշտ է հանդէս հանել դարերի փոշիների մէջ անյայտ մնացած հին ձեռագիրների, պատմական անտիպ յիշատակարանների, զրական անձանթ գանձերը:

Այսպէս էր հնչում 19-րդ դարի կիսին Գերման բանասիրական զրականութիւնը: Այդ ձայնը արձագանգում էր զօրեղ, հոժկու կոչով, Դա ժամանակի լոգունքն էր, բանասէրների դաւանանքը:

Ամէն տեղ, քաղաքակիրթ բոլոր երկիրներում, արձագանգում էր կուլտուրական այդ իղէան:

19-րդ դարի կիսին, Գերմանիայում, անտիպ նիւթերի մշակութիւնը զրեց կանոնաւոր հիմքերի վրայ և 50—60 տարւայ ընթացքում զարմանալի առաջդիմութիւն արեց:

Գերմանիայից բանասիրական շարժումն անցաւ Ֆրանսիա, այնտեղից էլ Ռուսաստան, ապա բոլոր լուսաւոր ազգերին:

Էւ այն մեզանում էլ նոյն կուլտուրական կոչը, նոյն զրական շարժումը:

Գրաւոր անմշակ նիւթերի հրատարակութիւնը նոր լոյս պիտի սփռէր հայ

կուլտուրայի պատմութեան վրայ: Այդ նիւթերի ուսումնասիրութիւններն արժէքաւոր էին ոչ միայն հայ ժողովրդի զրական — կուլտուրական պատմութեան տեսակէտից, այլ և համաշխարհային քաղաքակրթութեան պատմութեան տեսակէտից: Բայց ինչ էր ներկայացնում մեզանում բանասիրական զրականութիւնը:

Շատ աղքատիկ մի պատկեր:

Դեռ նոր էինք ընդ զարթնում: Դեռ նոր էինք սովորում, որ պէտք է ուսումնասիրել, հետազոտել, ընկել ոչ միայն մեր հին և միջնադարեան զրական — կուլտուրական կեանքը, այլ և մեր պատմական անցեալի անտիպ գանձերը:

Այդ հսկայական և ծանր աշխատանքն ընկնում էր գլխաւորապէս հայ բանասէր — բանահաւաքների վրայ: Ամէն ինչ սպասում էր նրանց անխնայ և տոկուն պրպրտումներին, հետախուզող, քրքրող մանրակրկիտ ուսումնասիրութիւններին, նրանց երկաթէ համբերութեանը, խորաթափանց հայացքին ու մտքին:

Ունէինք ժամանակի կրակով վառած բանասէրներ — Գէորգ Ավէրդեան, Ռսկան Յովհաննէսեան, Սլաւոնսոն: Ունէինք Վենետիկի և Վիեննայի գիտնական — բանասէր վարդապետներ, որոնք հասկանում էին բանասիրութեան հրամայողական պահանջը, բայց չունէինք պիտեմատիկ, կենդանի գործունէութիւն:

Այսպէս կամ այնպէս՝ մեզանում բանասիրական գիտակցութիւնն սկսեց 40-ական թւականներից: Այն ինչ որ դարերի ընթացքում արճամաւած էր, փոշիների ներքոյ ընկած, սկսեց մեծ խնամքով հաւաքւել և մշակւել: Ջանազան պարբերական հրատարակութիւններում — «Բազմավեպ», «Մասիս», «Կոռնկ», «Արժի վաւարակութիւն» և այլն, լոյս տեսան հայ ժողովրդի կուլտուրական — զրական կեանքի անտիպ էջերը: Նոյն իսկ հրատարակեցին ուսանձին գրքոյկներ. 1852 թ. Մոսկւայում Գ. Ավէրդեան լոյս ընծայեց տաղանդաւոր քնարերգակ Սյայաթնովայի անտիպ դավթարը: 1855-9 թ. Ռսկան Յով-

հաննիսեանը՝ «Նոր քնար Հայաստանի» Ա. Բ. Գ. Դ. տետրակները:

Այդ բոլորը, սակայն, գործի սկիզբն էր, Բանասիրական հորիզոնը դեռ նոր էր շառագունում:

60–70–ական թվականներին բանասիրութիւնը զրեց աւելի կանոնաւոր հիմքերի վրայ: Այսից լուրջ ուսումնասիրութիւն և հետաքրքրութիւն դէպ ի հայ ժողովրդի պատմական անցեալը, Բանասիրական հորիզոնի վրայ հետզհետէ յայտնեցին մի շարք բանասէրներ, որոնք խնամքով ուսումնասիրեցին հայ զրական կեանքը, հաւաքեցին ժողովրդական բանահիւսութիւնը, քրքրեցին հին ձեռագիրները, փոշիների տակից փրկեցին հայի պատմական սիրտն ու հոգին, նրա ստեղծագործական էջերը:

Այդ անխոնջ բանասէր մշակներից մէկն էր Կար. Կոստանեանը:

Բ.

Բանասէրը

1920 Յունւար 1–ին, Մոսկւայում, հայոց բանասիրական հորիզոնից անյայտացաւ Կար. Կոստանեանը: Մեռաւ նա պրոֆեսորական մեծ յեղափոխութեան օրերին՝ անյայտութեան մէջ, մի այնպիսի բեղմնաւոր հասակում՝ երբ դեռ հայագիւթութիւնը նրանից շատ սպասելիքներ ունէր:

Նա հայագիւթութեան բազմաշխատ բանասէր – պատմագէտն էր, որ իր ամբողջ կեանքը նւիրեց հայ անմշակ երգին ու տաղին, միջնադարեան բանահիւսութեան, հին պատմագրութեան և հայ եկեղեցու մատենագրութեան:

Նրա ամբողջ կեանքը հետազոտութիւններին, պրպտումներին, ուսումնասիրութիւններին և վերլուծութիւններին մի ամբողջ շարան է, բեղմնաւոր և արգասալից:

Նա էր, որ առաջին անգամ փոշիների տակից, անյայտութեան խաւարից, փրկեց միջնադարեան հայ տաղերն և ցոյց տուց,

թէ ինչպիսի գրական գանձեր ունի հայ ժողովուրդը միջին դարերի մշակների մէջ:

Նա էր, որ ուսումնասիրեց և լուսաբանեց հայ քնարի միջնադարեան որոշ շրջանը, գծեց հայ եկեղեցու պատմութիւնը, փրկեց մի շարք պատմական անյայտ հեղինակներ, նկարագրեց հայոց տոհմը և տունը, բացատրեց հայոց հեթանոսական կրօնի էութիւնը, և այլն:

Նա իր մատնագիտական արժեքաւոր հրատարակութիւններով հետաքրքիր էջեր բաց արեց հայ բանասիրութեան առաջ՝ հին և միջնադարեան զրականութեան պատմութիւններից:

Նրա մահով հայ բանասիրութիւնը կորցրեց իր բարեխիղճ և քրտնաջան մշակին, իսկ հայ դպրոցը՝ իր լաւագոյն դէմքերից մէկին:

Փ.

Նրա կեանքը. – Մանկավարժական գործունէութիւնը

Կար. Կոստանեանի օրօրանքը Ալէքսանդրապոլն է, հայ աշուղների հայրենիքը, ուր ծնւել է նա 1853 թւին: Այնտեղ էլ անցաւ նրա մանկութեան շրջանը, իսկ պատանեկան կեանքը՝ Թիֆլիզ, ուր մտաւ նա գիմնազիոնը և ստացաւ իր միջնակարգ կրթութիւնը: Այնուհետեւ անցաւ Պետերբուրգ բարձրագոյն կրթութիւն ստանալու տենչով: Այնտեղ արժանապարհեց համալսարանի արեւելեան լեզուներին բաժնին, աշակերտելով յայտնի գիտնական – բանասէր Բերովը և Պատկանեանին: Դրանով էլ վերջացաւ նրա ուսումնական շրջանը:

Հասարակական գործունէութեան համար Կոստանեան ընտրեց ուսուցչական ասպարէզը: Ամբողջ հոգով և սրտով նւիրեց նա մատաղ սերնդի դաստիարակութեան և կրթութեան ծանր և պատասխանատու գործին, որին հաւատարիմ մնաց մինչև իր մահը: Գլխաւորապէս պաշտօնավարեց երեք առաջնակարգ կենտրոններում – Թիֆլիսում, Էլմիաձնում և Մոսկւայում:

Նրա մանկավարժական գործունէութեան

Թիւնն սկսեց 1878 թւից, Այդ թւականից մինչև 1883 և 1885-91 թւականները նա, իբրև ուսուցիչ, պաշտօնավարեց Էջմիածնի Գէորգեան ճեմարանը։ Այդ շրջանում նա ցոյց տւեց մանկավարժական հմտութիւն և բարեխղճութիւն, որով շուտով աչքի ընկաւ և ահա 1891-4 թւականը տեսուչ նշանակւեց Ներսիսեան Դըպրոցին, որ վարեց արտակարգ աջոգութեամբ և ձեռք բերեց կարող տեսչի անունը։ Այդ համարը վարձատրւեց խրիմեան Հայրիկից, որ 1894 թիւն հրաւրեց նրան Էջմիածին, իբրև տեսուչ Գէորգեան ճեմարանին։ Այդ պատարհիբ պաշտօնը վարեց նա 1902-5 թւականը, Բայց նրա մանկավարժական համբաւն աւելի բարձրացաւ, երբ 1911 թւին տեսուչ նշանակւեց Մոսկուայի Լազարեան ճեմարանին։ Այդ պաշտօնը վարեց նա մինչև իր մահը։

Իբրև ուսուցիչ նա խիստ էր, բարեխիղճ ու գործունէայ։ Կրթեց և դաստիարակեց նա մի ամբողջ սերունդ, տղորւած առաջադիմական գաղափարներով և համամարայն իդէալներով։

Այսօր ապրում է նա իր հազարաւոր աշակերտների հոգիներում։

Գ.

Կոստանտինի բանասիրական գործունէութիւնը

Մանկավարժական գործունէութեան հետ զուգընթաց Կոստանեան պարապեց նաև գրականութեամբ։ Նա ամբողջապէս նւիրեց իրեն գրաւոր անմշակ նիւթերի ուսումնասիրութեան ծանր գործին։ Այդ զբաղմունքը նրա գերագոյն իդէալը, նրա պաշտամունքն էր, Համարեա ամբողջ կէս դար գործեց հայագիտական ասպարիզում և միշտ հուսատարիմ մնաց իր փայփայած իդէալին։

Բաւական երկար շղթայ են կազմում նրա երկասիրութիւնները. հասնում են մօտաւորապէս 100-ի, Հայագիտական փոքրիկ հրատարակութիւններ են նրա ու-

սումնասիրութիւնները, որոնք կարեւոր նշանակութիւն ունին հայ հին և նոր գրականութեան պատմութեան և պատմահասարակական, տնտեսական մատենագրութեան շրջանների համար։

Գլխաւորապէս ընդգրկել է նա երեք մասնաճիւղ, միջնադարեան մատենագրութիւն, նախնի պատմութիւն և ազգագրութիւն։

Կոստանեան մեզանում ամենատաղին բանասէրն է, որ խորապէս գնահատեց և զրազեց միջնադարեան հայ գրականութեան ուսումնասիրութեան մշակման ու զարգացման գործով։

Մեր գրական-կուլտուրական վերածնութեան ամենաուշագրաւ շրջաններից մէկն է կազմում միջնադարեան շրջանը, որ սկզբնաւորեց Կոստանդին Երզնկացու ժողովրդական գողտրիկ բանաստեղծութիւններով, և զարգացաւ ու աւելի փայլ ստացաւ Յովհաննէս Երզնկացու, Ֆրիկ, Յովթիկուրացու, Գրիգորիս Աղթամարցու, Մկրտիչ Նաղաշի, Մինաս Թոխատեցու, Նահապետ Փուշակի և այլ տաղերգուների ստեղծագործութիւններով։

Այդ գրականութիւնը սակայն, դարեր շարունակ ամփոփւած էր ձեռագիրների փոշու մէջ, Կոստանեան գիտակցեց նրանց առաջնակարգ նշանակութիւնը և եռանդով ու հաւատով լծեց նրանց ուսումնասիրութեան ծանր աշխատանքին, Շնորհիւ իր անխոնջ հետազօտութիւնների՝ նա հանդէս բերեց մի շարք գրական անյայտ թանկագին գանձեր, որոնք կրում են «Միջնադարեան հայոց տապիր և ոտանաւորներ» (եօթը տետրակ) խորագիրը։ Այդ հրատարակութիւններն արժէքաւոր են կրկնակի տեսակէտներով. նրանցով կուստանեան՝ նախ ցոյց տւեց հայ ժողովրդական միջնադարեան քնարի ուժն և հմայւրը, երկրորդ՝ մասամբ լուսաւորեց մեր միջնադարեան գրական-կուլտուրական անյայտ շրջանը, երրորդ՝ հարստացրեց մեր միջին դարի սահմանափակ ու աղքատիկ մատենագրութիւնը, և չորրորդ՝ նոր ուղի բացեց հայ բանասէրների առջև, որի

վրայով յետագայում անսայթաց առաջացան Հ. Մ. Պոտուրեան, Արշակ Չոպանեան, Հ. Ներսէս Ալիքեան և ուրիշներ:

Այս կարգի աշխատութիւններէ յիշատակենք նաև Կոստանեանի «Հայոց արդի բանահայտութիւնը» և Խառն ժողովածո ժողովրդական երգերի և միջնադարեան տաղերի» անտիպ ուսումնասիրութիւնները:

Կոստանեան ձեռնարկեց նաև պատմական արժէքաւոր նիւթերի հրատարակութեան: Եւ քննեց, ուսումնասիրեց և հետազօտեց հայ պատմութեան նախնի և նորագոյն շրջանների և կառուցեց մանր բայց արժէքաւոր հատորներ, ինչպէս «Նիւրբեր հայկ. քաղաքակրթութեան նորագոյն պատմութեան» (անտիպ), «Ռուսաց կայսրուհի յարաբերութիւնը հայոց կաթողիկոսների հետ» (անտիպ), «Ղարաբաղի հայ Մկիթները» (անտիպ), «Հոսովմայ պապերի յարաբերութիւնը հայոց հետ» (անտիպ), «Հայոց պարբերական մամուլը» (անտիպ), «Հայոց վանքերը», «Հայոց հերանուսական կրօնը», «Վիմական Տարեգիրք», «Գրիգոր Մագիստրոսի րօրերը» և այլն: Պատմական կարևոր հետազօտութիւններ են սրանք, որոնց մէջ ուշադիր ընթերցողը կը գտնէ հայ կուլտուրական, քաղաքական, անտեսական, շինարարական և եկեղեցական կեանքի վերաբերեալ առատ նիւթեր:

Այն նաեւ արժէքաւոր ուսումնասիրութիւններ են այն մի շարք տետրակները, որոնք անդրադառնում են անյայտ և անծանօթ հեղինակների շուրջ, ինչպէս «Թովմա Մեծոփեցու յիշատակարանը», «Համամ Արևիկի», «Պետրոս Ա. Գեօտարաճ», և այլն: Կոստանեան ոչ միայն հանդէս է բերել նրանց, այլ և գծել է նրանց գործերը, տեղեկութիւններ տւել նրանց ժամանակի, կեանքի և գործունէութեան մասին:

Կոստանեան թողել է նաև ազգագրական ուսումնասիրութիւններ, որոնց մէջ առաջնակարգ տեղ է գրաւում «Հայոց

տոհմ և տուն» խորագրով անտիպ երկը, որ բովանդակում է իւր մէջ հայ երկրի տեղագրութիւնը, նախաբանական տոհմերը, ժամանակագրական նախնական հաղցերը, հայոց նախնական պատմութիւնը, սկզբից մինչև է. դար (Ն. Փ. Գրիստոս):

Բայց յիշատակածներից՝ արժէքաւոր են նաև հետեւեալ անտիպ ուսումնասիրութիւնները. «Դաշակոյ բողոքը», «Մեսրոպ Թադիսեանց և նորոն վերաբերեալ նիւթեր», «Ինչ երգեր էինք յսում մեր մոնկոթեան օրերում», «Հայոց միջնադարեան քաղաքակրթական ցոյցեր և երանց երգերի ցանկը», «Պատկերներ էջմիածնի վանական կիսերից»:

Ունի նաև մի քանի մանր աշխատութիւններ, որոնք սակայն բանասիրական նշանակութիւն չունին. դրանք են «Մադկալա», «Նախաշախիղ», «Գրաւարի խոնարհութիւնը», «Հիւսնոյք բանից նախնի պատմագրաց» և այլ գրաւոր դասագրքեր: Եզրափակենք.—կար. Կոստանեանը հայագիտական ասպարիզի անխռն և քրտնաշան մշակներից մէկն է: Այդ ասպարիզում նա աւելի քան կէս դար ծառայեց միշտ հաստատարի մնալով իւր ընդգրկած դրօշակին:

Նա փոշիների ներքոյ ընկած ձեռագիրների և յիշատակարանների միջից փրկեց բանասիրական արժէքաւոր և հետաքրքրական նիւթեր, որոնք լոյս են սփռում հայ գրական — կուլտուրական և պատմա-սօցիալական կեանքի այս կամ այն շրջանը և միաժամանակ ցոյց տալիս հայ ժողովրդի ստեղծագործական ուժի և ոգին: Ահա այդ տեսակէտներով Կոստանեանի հայագիտութեան մատուցած ծառայութիւնները արժանի են երախտագիտութեան և յարգանքի:

ԱՐԱՄ ԵՐԵՄԵԱՆ

Վիեննա
16 Մայիս 1923